

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատի կողմից թիվ ԵԴ/50197/02/21 քաղաքացիական գործով 2025
թվականի հունիսի 02-ին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ
մասերի վերաբերյալ**

02.06.2025 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2025 թվականի հունիսի 02-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.03.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի հայցի ընդդեմ Նորիկ Միքաելյանի, Երրորդ անձինք Գայանե Սահակյանի, Արմեն և Նարինե Միքաելյանների՝ ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, որոշել է. «Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.03.2023 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մերժել: Թիվ ԵԴ/50197/02/21 քաղաքացիական գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության»:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Էդ. Սեդրակյանս, Ն. Հովսեփյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանը որպես գործի դատավարական նախապատմություն նշել է հետևյալը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորք թաղամասի թիվ 83 տուն հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Նորիկ Միքաելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բաժինը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վերը նշված գույքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ բռնագանձումը տարածելով Նորիկ Միքաելյանի բաժնի վրա:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.07.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.03.2023 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 15.07.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի հիմքեր, հիմնավորումներ և պահանջ նշել է հետևյալը.

«Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 60-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ և 337-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-8-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսում է հոսել այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր իրավունքի խախտման, այլ ոչ թե պատասխանողի գույքային դրության մասին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ պատասխանողի կողմից Բանկի իրավունքները խախտելու փաստի վրա հասնելուց՝ վարկային պարտավորությունները չկատարելուց հետո Բանկը դիմել է իրավունքի պաշտպանության և ստացել իր հայցը բավարարող վճիռ: Հետևաբար այդ պահից սկսած արդեն առարկայազուրկ է խոսել հայցային վաղեմության և այդ ինստիտուտի կիրառության մասին, քանի որ իրավունքի պաշտպանությունն արդեն իսկ իրացվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.03.2023 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ մերժելով հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը, կամ գործն ուղարկել նոր քննության»:

3. Վճռաբեկ դատարանը որպես վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

«Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի եռակազմ արբիտրաժային տրիբունալի 28.02.2017 թվականի թիվ 10-141/07/16 վճռով «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ «Յուլիոռզ» ՍՊԸ-ի, Գայանե Գալստյանի, Նորիկ Միքաելյանի, Էդուարդ Շահբազյանի և Միհրան Ավագյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է **(հատոր 1-ին, գ.թ. 10-21).**

2) թիվ ԵԿԴ/0455/17/17 գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 01.11.2017 թվականին որոշում է կայացրել «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի իրավահաջորդ Բանկի դիմումը բավարարելու՝ Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի արբիտրաժային տրիբունալի 28.02.2017 թվականի թիվ 10-141/07/16 վճիռը պարտադիր ճանաչելու և դրա հիման վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարողական թերթ տրամադրելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 22-26).**

3) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.11.2017 թվականի որոշման հիման վրա 01.11.2017 թվականին տրամադրվել է կատարողական թերթ **(հատոր 1-ին, գ.թ. 27, 28).**

4) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետը 18.06.2018 թվականի գրությամբ Բանկին առաջարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն դիմել դատարան՝ Նորիկ Միքայելյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքով գրանցված Երևան քաղաքի Նորք թաղամասի թիվ 83 տուն հասցեում գտնվող անշարժ գույքի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով: Նշված գրությունը Բանկի կողմից ստացվել է 21.06.2018 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 29**).

5) գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 04.07.2018 թվականի տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորք թաղամասի թիվ 83 տուն հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է Գայանե Սահակյանի (1/4), Արմեն Միքայելյանի (1/4), Նորիկ Միքայելյանի (1/4) ու Նարինե Միքայելյանի (1/4) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 30**).

6) Բանկը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասով, 16.07.2018 թվականի գրությամբ Գայանե Սահակյանից, Նորիկ, Արմեն և Նարինե Միքայելյաններից պահանջել է Նորիկ Միքայելյանի պարտքը մարելու համար շուկայական գնով գնել վերջինիս բաժնեմասն ու համաձայնության (առարկության) մասին տեղեկացնել իրեն նույն գրությունն ստանալուց հետո 30-օրյա ժամկետում՝ միաժամանակ նշելով, որ «Բանկը կհամարի, որ հրաժարվել եք ձեռք բերել վերջինիս բաժնեմասը և կդիմի դատարան՝ անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջով»: Նշված գրությունը վերը նշված անձինք ստացել են 21.07.2018 (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**).

7) Բանկը փոստային առաքման եղանակով 29.10.2021 թվականին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Նորիկ Միքայելյանի, երրորդ անձինք Գայանե Սահակյանի, Արմեն և Նարինե Միքայելյանների՝ պահանջելով Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորք թաղամասի թիվ 83 տուն հասցեում գտնվող անշարժ գույքից առանձնացնել Նորիկ Միքայելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բաժինը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վերը նշված գույքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ բռնագանձումը տարածելով Նորիկ Միքայելյանի բաժնի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 4-39**).

8) Դատարանի 18.11.2021 թվականի որոշմամբ նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 1**).

9) Նորիկ Միքայելյանի ներկայացուցիչ Մարտուն Մկոյանը 07.02.2022 թվականին հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան (**հատոր 1-ին, գ.թ. 68-79**)»:

4. Հատուկ կարծիքի հիմնավորումները՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ օրենսդիրը, խախտված իրավունքների պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետներ նախատեսելով, միաժամանակ սահմանել է այդ ժամկետների ընդհատման և կասեցման կարգն ու հիմքերը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ և 340-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ է հայցը սահմանված կարգով (օրենքով սահմանված կարգով) հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատասխան և ընդունվել է դատարանի կողմից: Հայցային վաղեմության ընթացքի ընդհատման յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային վաղեմության ժամկետն սկսում է հոսել վերստին (*տե՛ս «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ն ընդդեմ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի թիվ*

ԵԿԴ/0526/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով «երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ» եզրույթներին, իր 28.09.2021 թվականի թիվ ՍԴՈ-1611 որոշմամբ արձանագրել է, որ՝ «(...) վիճարկվող իրավադրույթներում առկա քննարկվող հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է հետևյալը. «իմացել է» ձևակերպումը մատնացույց է անում խախտման մասին հաստատապես իմանալու հանգամանքը: Մինչդեռ, «պետք է իմանար»/«պարտավոր էր իմանալ» ձևակերպումը վերաբերում է այն բոլոր իրավիճակներին, երբ գործի հանգամանքներից չի բխում իրավունքի խախտման մասին հաստատապես իմանալու փաստը, սակայն ենթադրվում է, որ համանման իրավիճակում իրավահարաբերության սուբյեկտը պետք է ձեռնարկեր իր իրավունքի ենթադրյալ խախտման հարցում հաստատապես համոզվելու համար բավարար տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողություններ՝ գերծ մնալով «անբարեխիղճ» պասիվ վարքագծից: Այլ կերպ, վիճարկվող հոդվածներում կիրառվող՝ «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» արտահայտությունները կրում են այն բովանդակային ծանրաբեռնվածությունը, ըստ որի, քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին»:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ինչպես բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից՝ օրենսդիրը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը կապել է ոչ թե իրավունքի խախտման պահի, այլ այն օրվա հետ, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի այս կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, ըստ որի՝ եթե անձն իր իրավունքի խախտման մասին չիմանա, ապա չի էլ կարող ձեռնամուխ լինել որևէ եղանակով՝ այդ թվում և հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքի պաշտպանությանը (տե՛ս «Այնսս պյուս» ՄՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը: (...) (տե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի թիվ ԵՄԴ/1149/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել պարտատիրոջ իրավունքի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի կիրառելիությանը, արձանագրել է, որ **հարկադիր կադարողի 11.12.2003 թվականի որոշմամբ պահանջարերը տեղեկացվել է իր իրավունքների չվերականգման և դրանց վերականգնման նոր հնարավորության մասին, որ պահից և սկսվել է ընդհանուր գույքից**

պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը: Փաստորեն, 11.12.2003 թվականից պահանջատերը հնարավորություն է ունեցել ձեռնամուխ լինել իրականացնելու իր խախտված իրավունքների պաշտպանությունը, մինչդեռ հայցով դատարան է դիմել միայն 21.03.2007 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո (տե՛ս Գայանե Հովհաննիսյանը, Դավիթ Բալասանյանն ընդդեմ Աջափնյակ և Դավթաշեն համայնքների դատախազության, երրորդ անձ Գևորգ Բալասանյանի՝ թիվ 3-486(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.09.2008 թվականի որոշումը):

Հարկ եմ համարում արձանագրել, որ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու պարտատիրոջ իրավունքի նկատմամբ կիրառելի է հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը, որը երեք տարի է, քանի որ օրենքով այլ՝ հատուկ ժամկետ սահմանված չէ:

Անդրադառնալով պարտապան հանդիսացող բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի հոսման պահին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ այդպիսի պահ է այն պահը, երբ պահանջատերն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների վերականգման անհնարինության և դրանց վերականգնման նոր հնարավորության, այն է՝ պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու հնարավորության մասին:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի՝ մասնավորապես Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ Ա. Հարությունյանի կողմից Բանկին ուղղված 18.06.2018 թվականի թիվ եգ-21044/06 գրության համաձայն՝ Բանկին առաջարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն դիմել դատարան քաղաքացի Նորիկ Միքայելյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքով գրանցված Երևան քաղաքի Նորք թաղամասի 83 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով: Նշված գրությունը Բանկի կողմից ստացվել է 21.06.2018 թվականին:

Սույն գործով ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին հայցադիմումը Դատարան է ներկայացվել 29.10.2021 թվականին:

Նորիկ Միքայելյանը 07.02.2021 թվականին հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան:

Դատարանը 15.07.2022 թվականի վճռով հայցը մերժել է այն հիմնավորմամբ, որ «(...) «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն 21.06.2018թ.-ին ստացել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետ Ա. Հարությունյանի 18.06.2018թ. գրությունը վերոնշյալ բովանդակությամբ, ինչի հիման վրա Դատարանը հաստատված է համարում, որ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն իմացել է Նորիկ Լաերդի

Միքայելյանի կողմից քաղաք Երևան, Նորք թաղամաս 83 հասցեում գտնվող անշարժ գույքում բաժին ունենալու մասին: Այսինքն՝ հենց նշված պահից էլ սկսվել է ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Դատարանն արձանագրում է, որ առնվազն 21.06.2018 թվականից պահանջատերը հնարավորություն է ունեցել ձեռնամուխ լինել իրականացնելու իր խախտված իրավունքների պաշտպանությունը, մինչդեռ հայց է ներկայացրել դատարան միայն 27.10.2021 թվականին՝ հայցային վաղեմության եռամյա ժամկետը լրանալուց հետո»:

Վերաքննիչ դատարանը Բանկի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 15.07.2022 թվականի վճիռը թողել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «(...) Դատարանի եզրահանգումն առ այն, որ տվյալ դեպքում լրացել է հայցային վաղեմության ժամկետը և հայցը ենթակա է մերժման իրավաչափ է, քանի որ գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորը Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետի դեռևս 18.06.2018 թվականի թիվ 21044/06 գրությամբ իրազեկվել է, որ կարող է դիմել դատարան քաղաքացի Նորիկ Լաերդի Միքայելյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքով գրանցված ք. Երևան, Նորք թաղամաս 83 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով:

Մինչդեռ, հայցվորը, իրազեկ լինելով իր խախտված իրավունքների վերականգնման նոր հնարավորության մասին, դատական պաշտպանության է դիմել միայն 04.11.2021 թվականին՝ բաց թողնելով իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը»:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Տվյալ դեպքում գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցվորը դեռևս Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն բաժնի պետի 18.06.2018 թվականի թիվ եգ-21044/06 գրությամբ տեղեկացվել է իր իրավունքների չվերականգման և դրանց վերականգնման նոր հնարավորության մասին առ այն, որ իր խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնելու նպատակով կարող է դիմել դատարան քաղաքացի Նորիկ Միքայելյանի անվամբ բաժնային սեփականության իրավունքով գրանցված Երևան քաղաքի Նորք թաղամասի 83 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով: Նշված գրությունը հայցվորն ստացել է 21.06.2018 թվականին, որ պահից էլ սկսվել է ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջով հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Մինչդեռ, հայցվորը, 21.06.2018 թվականից իրազեկ լինելով իր խախտված իրավունքների վերականգնման նոր հնարավորության մասին, դատական պաշտպանության է դիմել 29.10.2021 թվականին՝ բաց թողնելով հայցային վաղեմության եռամյա ժամկետը:

Փաստերի նման դասավորվածությունից հետևում է, որ սույն գործով առկա է եղել հայցային վաղեմություն կիրառելու հիմքեր, որպիսի իրավաչափ հետևությանն է եկել Վերաքննիչ դատարանը 10.03.2023 թվականի որոշմամբ, որով անփոփոխ է թողել Դատարանի 15.07.2022 թվականի վճիռը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված **թիվ 3-486(ՎԴ) գործով 29.09.2008 թվականի** որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն ու հիմնավորումները գտնում են, որ բողոքում ներկայացված փաստարկները բավարար չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետերով նախատեսված պայմանների առկայությունը հիմնավորված համարելու, ուստի՝ այդ հիմքերով բողոքը վարույթ ընդունելու համար:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտ: Հետևաբար՝ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

Հետևաբար անհրաժեշտ էր վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.03.2023 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Դատավորներ՝

ԷԴ. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ